

ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալի մոտ կայացել է հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի հերթական նիստը

08.04.2015

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում տեղի է ունեցել ՀՀ Վայոց ձորի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի ընդլայնված նիստը, ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ Մելս Հարությունյանի նախագահությամբ: Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցել են մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների, ՀՀ ԳՄ –ի տարածքային համապատասխան ծառայությունների, հասարակական կազմակերպությունների ղեկավարներ: Հրավիրված են եղել <<Սեյվ դը Չիլդրեն>> միջազգային կազմակերպության ներկայացուցիչներ Ջինա Սարգիզովան, Գոհար Գալստյանը, <<Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով>> LIFE ծրագրի HDP հիմնադրամի տնօրեն Ռուզաննա Տեր-Ղազարյանը և այլք:

Օրակարգում ներառված են եղել հետևյալ հարցերը՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզի <<Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2015 թվականի տարեկան ծրագրի>> կատարման ընթացքը՝ զեկուցող հանձնաժողովի նախագահ Մելս Հարությունյան:
2. << Վայոց ձորի մարզում LIFE ծրագրի կողմից նախատեսված աշխատանքների մասին>>: Ջեկուցող՝ Ջինա Սարգիզովա Սեյվ դը Չիլդրեն" միջազգային կազմակերպության "Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով" LIFE ծրագրի տնօրեն:
- 3.<<Վայոց ձորի մարզում ՀԿ ներքինիները հաշմանդամություն ունեցող անձանց հետ տարվող աշխատանքներում>>: Ջեկուցող՝ Խնկանուշ Մարկոսյան՝ <<Սոցիալ-հոգեբանական և վիճակագրական հետազոտությունների կենտրոն>> ՀԿ նախագահ:

Ծավալված շահագրգիռ քննարկումից հետո, հանձնաժողովը որոշում է կայացրել հսկողություն սահմանել <<Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2015 թվականի տարեկան ծրագրի>> կատարման ընթացքին և Վայոց ձորի մարզում նշված ծրագրով նախատեսված աշխատանքների իրագործման նպատակով համագործակցել "Սեյվ դը Չիլդրեն" գրասենյակի և <<Հյուսիսային դիգնիթի ընդ փիս>> HDP հիմնադրամի հետ: